ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/78

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Վիրուս Նետ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով գնանշման հարցում, ավտոմատային հեռախոսային կայանների սարքերի և օժանդակ միջոցների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4044-2020 գրությամբ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 13.03.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/778-2020 գրության հիման վրա, 16.03.2020թ.-ին «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 17.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/78 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

25.03.2020թ.-ին, 13.04.2020թ.-ին և 15.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 13.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.04.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.03.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/778-2020 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Վիրուս Նետ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Մասնավորապես վերջինիս հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջվում է

ա) 36-րդ չափաբաժնում՝ մալուխի նվազագույն տրամագիծը, արտադրության տարեթիվը,

բ) 38-րդ չափաբաժնում՝ արտադրության տարեթիվը,

գ) 39-րդ չափաբաժնում՝ մալուխի արտաքին տրամագիծը, արտադրության տարեթիվը,

որոնք «Վիրուս Նետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ 05.03.2020թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը սահմանված կարգով «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցել է դրա մասին: Վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել անհամապատասխանությունների շտկումները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վերոհիշյալ կարգի 42-րդ կետը՝ 10.03.2020թ. գնահատող հանձնաժողովը որոշեց «Վիրուս Նետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:»:

3. <u>«Վիրուս Նետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4044-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ֆինանսների նախարարությունը 16.03.2020թ թիվ 26/26-1/4044-2020 գրությամբ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Ձեզ եմ ներկայացնում մասնակցի կարծիքը:

«Վիրուս Նետ» ՍՊ Ընկերությունը մասնակցելով ՀՀ Պաշտպանության Նախարարության կողմից հայտարարված 26.02.2020թ. կայանալիք «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով գնման ընթացակարգին՝ ներկայացրել է էլեկտրոնային հայտ գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով:

Մեր կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի փաստաթղթերում որպես ընկերության հետ կոնտակտային էլ. փոստ նշվել է info@virusnet.am հասցեն, իսկ էլեկտրոնային գնումների Armeps համակարգում նշված է եղել sales@virusnet.am հասցեն:

Մինչդեռ ընթացակարգի շրջանակներում 05.03.2020թ. (հինգշաբթի) ժամը 17:05-ին sales@virusnet.am էլ. փոստի հասցեին ՀՀ ՊՆ կողմից մեզ ուղարկվել է ծանուցում՝ հայտում անհամապատասխանությունների առկայության և մեկ աշխատանքային օրվա ընթացքում այն շտկելու պահանջի մասին:

Սակայն «Վիրուս Նետ» ՍՊ Ընկերության աշխատակիցը հիմք է ընդունել հայտի փաստաթղթերում նշված info@virusnet.am էլ. փոստի հասցեն և չի հետևել sales@virusnet.am էլ. փոստին, ինչի արդյունքում անհամապատասխանության շտկումը ուղարկվել է ՀՀ ՊՆ 09.03.2020թ. (երկուշաբթի) ժամը 11:43-ին, այսինք երկրորդ աշխատանքային օրը (մեկ օր ուշացումով):

Ավելացնեմ, որ մենք վերոնշյալ ծանուցման մասին տեղեկացել ենք կապնվելով ՀՀ ՊՆ գնումների աշխատակցի հետ հեռախոսազանգի միջոցով և անմիջապես ձեռնամուխ ենք եղել անհամապատասխանությունները շտկելու և նույն օրը (09.03.2020թ.) այն ուղարկել գնահատող հանձնաժողովին:

«Վիրուս Նետ» ՍՊ Ընկերությունը ընդունում է այն փաստը, որ անհամապատասխանության շտկումը ներկայացվել է սահմանված ժամկետից մի քանի ժամ ուշացումով, սակայն միաժամանակ հավաստում ենք, որ նշված խախտումը չի կատարվել միտումնավոր և վրիպակի արդյունք է, ու մենք պատրաստ ենք եղել և ներկայում ևս օատրաստ ենք կատարել գնման գործընթացի շրջանակում ստանձնած բոլոր պարտավորությունները:

Միաժամանակ հաշվի առնելով, որ «Վիրուս Նետ» ՍՊԸ հանդիսանալով խոշոր հարկատու և ցանցային սարքավորումների ներմուծող՝ հնարավորություն ունի մրցակցային գին առաջարկելու հայտարարվող մրցույթներում, և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեպքում վերջինս, ինչպես նաև պատվիրատու կազմակերպությունները կզրկվեն մրցակցային գործարքներից:

Հաշվի առնելով վերոգրյալ բոլոր հանգամանքները, խնդրում ենք խախտումը համարել ոչ էական և «Վիրուս Նետ» ՍՊ Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ավտոմատային հեռախոսային կայանների սարքերի և օժանդակ միջոցների ձեռքբերման նպատակով 17.02.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վիրուս Նետ» ՍՊԸ-ն:

«Վիրուս Նետ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 36-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժիններով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագրերը՝

36-րդ չափաբաժին՝ *«ցանցային մալուխներ՝ CAT 7e ITK FTP Ցանցային տվյալների փոխանակման ապահովումը առնվազն 50 մ: Արտաքին թաղանթը՝ պոլիվինիքլորիդ: Մեկուսիչ թաղանթ՝ պոլիէթիլեն: Մալուխի նվազագույն տրամագիծը՝ 5.9մմ:*

- մալուխի 1 մետրի դիմադրությունը 1 Մհց հաճախականության դեպքում 10 մՕհմ, իսկ 100 մՀց դեպքում՝ 60 մՕհմ,

- աշխատանքային թույլատրելի ջերմաստճանային պայմանները -30C +60C,

- լարերի քանակը (4x2) 4 զույգ,

- ոչ պակաս 50 մՀց հաճախականության թվային տվյալների փոխանակում

Մալուխը փաթաթված թմբուկների վրա: Մալուխի անընդհատ երկարությունը առնվազն 300մ: Արտադրության տարեթիվը 2019թ. և բարձր: »:

38-րդ չափաբաժին՝ *«ցանցային մալուխներ՝ CAT 5e FTP/UTP Ցանցային փվյալների փոխանցման ապահովումը առնվազն 50 մ: Արտաքին թաղանթը՝ պոլիվինիքլորիդ, մեկուսիչ թաղանթը՝ պոլիէթիլեն: Էկրանացված ալյումինե փայլաթիթեղով:*

- մալուխի 1 մետրի դիմադրությունը 1 Մhց հաճախականության դեպքում 10 մՕհմ, իսկ 100 մՀց դեպքում՝ 60 մՕհմ,

- աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանային պայմանները -20C +40 C,

- լարերի քանակը (4x2) 4 զույգ,

- ոչ պակաս50 մՀց հաճախականության թվային փվյալների փոխանակում

Մալուխը փաթաթված լինի թմբուկների վրա: Մալուխի անընդհատ երկարությունը առնվազն 300մ: Արտադրության տարեթիվը 2019թ. և բարձր: »:

39-րդ չափաբաժին՝ *«ցանցային մալուխներ՝ CAT 5e FTP մետաղյա ճոպանով նախատեսված արտաքին մոնտաժման համար, Ցանցային փվյալների փոխանցման ապահովումը առնվազն 100 մ: Մալուխի արտաքին տրամագիծը՝8.5մմ: Արտաքին թաղանթը՝ պոլիվինիքլորիդ, մեկուսիչ թաղանթը՝ պոլիէթիլեն: Ընդհանուր կրկնակի էկրան, փայլաթիթեղի ժապավենի և պղնձե լարերի գործվածքով: -Ալիքային դիմադրությունը 1-100 մՀց հաճախականության տիրույթում 100+-10 Օհմից - աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանային պայմանները -50C +70 C, - լարերի քանակը (4x2) 4 զույգ, յուրաքնաչյուրի տրամագիծը 0.51+-0.02մմ: - մինչև 100 մՀց հաճախականության թվային փվյալների փոխանակում Մալուխը փաթաթված լինի թմբուկների վրա:Մալուխի անընդհատ երկարությունը առնվազն 300մ: Արտադրության տարեթիվը 2019թ. և բարձր:»:*

Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, 36-րդ, 38-րդ և 39-րդ չափաբաժինների համար առաջարկել է հետևյալը.

36-րդ չափաբաժին՝ *«ցանցային մալուխներ՝ CAT 7e FTP Ցանցային փվյալների փոխանակման ապահովումը առնվազն 50 մ: Արտաքին թաղանթը՝ պոլիվինիքլորիդ: Մեկուսիչ թաղանթ՝ պոլիէթիլեն: Մալուխի 1 մետրի դիմադրությունը 1 Մhց հաճախականության դեպքում 10 մՕհմ, իսկ 100 մՀց դեպքում՝ 60 մՕհմ, - աշխատանքային թույլատրելի ջերմաստճանային պայմանները -30C +60C, - լարերի քանակը (4x2) 4 զույգ, - ոչ պակաս 50 մՀց հաճախականության թվային փվյալների փոխանակում Մալուխը փաթաթված թմբուկների վրա: Մալուխի անընդհատ երկարությունը առնվազն 300մ:»:*

38-րդ չափաբաժին՝ *«ցանցային մալուխներ՝ CAT 5e FTP/UTP Ցանցային փվյալների փոխանցման ապահովումը առնվազն 50 մ: Արտաքին թաղանթը՝ պոլիվինիքլորիդ, մեկուսիչ թաղանթը՝ պոլիէթիլեն: Էկրանացված ալյումինե փայլաթիթեղով: - մալուխի 1 մետրի*

դիմադրությունը 1 Մhց հաճախականության դեպքում 10 մՕհմ, իսկ 100 մՀց դեպքում՝ 60 մՕհմ, - աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանային պայմանները -20C +40 C, - լարերի քանակը (4x2) 4 զույգ, - ոչ պակաս50 մՀց հաճախականության թվային փվյալների փոխանակում Մալուխը փաթաթված լինի թմբուկների վրա;Մալուխի անընդհատ երկարությունը առնվազն 300մ:»:

39-րդ չափաբաժին՝ *«ցանցային մալուխներ՝ CAT 5e FTP մետաղյա ճոպանով նախատեսված արտաքին մոնտաժման համար, Ցանցային փվյալների փոխանցման ապահովումը առնվազն 100 մ: Արտաքին թաղանթը՝ պոլիվինիքլորիդ, մեկուսիչ թաղանթը՝ պոլիէթիլեն: Ընդհանուր կրկնակի էկրան, փայլաթիթեղի ժապավենի և պղնձե լարերի գործվածքով: -Ալիքային դիմադրությունը 1-100 մՀց հաճախականության տիրույթում 100+-10 Օհմից - աշխատանքային թույլատրելի ջերմաստիճանային պայմանները -50C +70 C, - լարերի քանակը (4x2) 4 զույգ, յուրաքնաչյուրի տրամագիծը 0.51+-0.02մմ: - մինչև 100 մՀց հաճախականության թվային փվյալների փոխանակում Մալուխը փաթաթված լինի թմբուկների վրա:Մալուխի անընդհատ երկարությունը առնվազն 300մ:»:*

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջվում է

ա) 36-րդ չափաբաժնում՝ Մալուխի նվազագույն տրամագիծը, արտադրության տարեթիվը,

բ) 38-րդ չափաբաժնում՝ Արտադրության տարեթիվը,

գ) 39-րդ չափաբաժնում՝ Մալուխի արտաքին տրամագիծը, արտադրության տարեթիվը, որոնք «Վիրաս Նետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է:

Նույն արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը 05.03.2020թ.-ին որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 10.02.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ուղարկվել է ծանուցում՝ sales@virusnet.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Հանձնաժողովի 03.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.4 կետի համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունները, Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4044-2020 գրությամբ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացվում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող

ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ

մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ավտոմատային հեռախոսային կայանների սարքերի և օժանդակ միջոցների ձեռքբերման նպատակով 17.02.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վիրուս Նետ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N 1.1) առկա են մի շարք անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջվում է

ա) 36-րդ չափաբաժնում՝ Մալուխի նվազագույն տրամագիծը, արտադրության տարեթիվը,

բ) 38-րդ չափաբաժնում՝ Արտադրության տարեթիվը,

գ) 39-րդ չափաբաժնում՝ Մալուխի արտաքին տրամագիծը, արտադրության տարեթիվը, որոնք «Վիրաս Նետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է:

Նույն արձանագրության համաձայն՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը 05.03.2020թ.-ին որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 10.02.2020թ.-ին armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ուղարկվել է ծանուցում՝ sales@virusnet.am էլեկտրոնային փոստի հասցեին:

Հանձնաժողովի 03.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.4 կետի համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել անհամապատասխանությունները, Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություններ խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով Մասնակցի այն դիրքորոշմանը, որ մասնակցության հայտով՝ դիմում հայտարարությամբ Մասնակիցը նշել է մեկ այլ info@virusnet.am էլեկտրոնային փաստի հասցե, սակայն շտկման մասին Հանձնաժողովի կողմից կազմված ծանուցումը ստացել է sales@virusnet.am էլեկտրոնային փոստի հասցեին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել ներքոգրյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/5» ծածկագրով ընթացակարգի գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի արդեն 8.18-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Ամբողջացնելով վերոգրյալ իրավական նորմերը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ եթե գնանշման հարցումն իրականացվում է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, ապա Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի՝ www.armeps.am միջոցով՝ Մասնակցի Armeps համակարգում գրանցված էլեկտրոնային փաստի հասցեին, իսկ մասնակցի կողմից Հանձնաժողովին և (կամ) պատվիրատուին ուղղված գրությունները

(ծանուցումները) ուղարկվում են՝ Մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստից՝ հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով թիվ 1.1 հավելվածի շտկված տարբերակը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4044-2020 գրությամբ «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/78 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վիրուս Նետ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**